



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

05.05.2022թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Մ.Գասպարյանը, Ն. Վարդանյանը, Կ.Դավթյանը, Ն.Բաբայանը, Տ. Եփրեմյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանջյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
4. Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-037-0206-0078 ծածկագրով 0,22847 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/